ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**գյուղ Տեղ** **1 ապրիլի 2022թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 26-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2022 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N67-Լ հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի փետրվարի 15-ի N71-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2022 թվականի մարտի 18-31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) օրենսդրությամբ սահմանված համապատասխան բնագավառներում՝ 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի համար, առանձին ցուցանիշներով՝ 2020, 2021 թվականների համար:

1. Հիմք ընդունելով հաստատված հարցաշարերի հիման վրա կազմված արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Տեղ համայնքի ղեկավարն իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Տեղ համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝**

**Դ.Ղուլունց**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում իրականացված իրավական և
մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման
վերաբերյալ
2022 թվականի մարտի 31-ի արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության համապատասխան բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, ընդերքօգտագործում, պաշտպանություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, տրանսպորտ և կապ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության արդյունքները:
(Այն բնագավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

### 1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N03-Ն հրամանով հաստատված հարցաշարի մասով՝

| Հ/Հ | Հ/ենթ ահամա ր | Դրույթների անվանումը | Դրույթի համար հիմք հանդիսացող իրավական նորմը | Պահպանված է, Թերի է պահպանված, Պահպանված չէ, Գործառույթ չի իրականացվել | Հայտնաբերված խախտումները, *(հստակ նշել իրավական ակտի փարեթիվը, ամիսը, ամսաթիվը, անվանումը, համարը, հոդվածը, մասը, կետը, ենթակետը, պարբերությունը)* | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|---|---|
| | *ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ* | | | | | |
| 1 | 2) | *ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը.* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մաս | Թերի է պահպանված | Համայնքի ավագանու համամասնական ընտրակարգի ժամանակ մշտական հանձնաժողովներ ստեղծվել էին, սակայն հանձնաժողովների նիստերի անցկացման մասին արձանագրություններ [illegible] | Այսուհետ բացառել խախտումները |
| 1 | 9) | *համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կապարելու ընթացակարգի սահմանում՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի համաձայն.* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերություն | Թերի է պահպանված | 2020 և 2021 թվականների համար համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 2-Ն որոշման մեջ նման ընթացակարգ նախատեսված չէր: 2021 թվականի նոյեմբերի 17-ի N 37-Ն որոշմամբ արդեն նման ընթացակարգ սահմանված է: | X |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **3** | 2) | *ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն (ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը).* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 83-րդ հոդվածի 2-րդ մաս և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ և 5-րդ մաս | Թերի է պահպանված | Համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի N 6-Ա և 2022 թվականի մարտի 10-ի N 14-Ա որոշումներ: 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացությունները առկա չեն: | Ապահովել դրույթի կատարումը: |
| **4** | 1) | *համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների առկայություն (մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը).* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս | Թերի է պահպանված | Համայնքի ավագանու **2020** թվականի հուլիսի 14 N 17-Ա, դեկտեմբերի 2-ի N 29-Ա **2021** թվականի ապրիլի 23-ի N 11-Ա, հուլիսի 9-ի N 24-Ա և դեկտեմբերի 1-ի N 47-Ա որոշումներ: | Ապահովել դրույթի կատարումը: |
| **4** | 3) | *համայնքի ավագանու կողմից իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացում, որի հիմնական խնդիրներն են.* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մաս | Թերի է պահպանված | 2020 թվականին չի իրականացվել, 2021 թվականին իրականացվել է | Ապահովել դրույթի կատարումը: |
| **4** | 3-ա. | *բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| **4** | 3-բ. | *բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը, (առկայության դեպքում),* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| **4** | 3-գ. | *բյուջետային պարտավորությունների կատարման, հասփիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **4** | 3-դ. | *բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դ) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| **4** | 3-ե. | *բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը:* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ե) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| **9** | **9.** | ***Համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ ավագանու իրականացրած վերահսկողության վերաբերյալ արձանագրության առկայություն:*** | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ | Թերի է պահպանված | Չկա կոնկրետ հսկողության վերաբերյալ որևէ արձանագրություն, սակայն առկա են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունները, որոշումները, որոնք նույնպես իրականացվող հսկողության բաղադրիչ են: | Այսուհետ ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| **17** | 2) | *տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգի վերաբերյալ Ավագանու որոշման առկայություն.* | <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդված | Պահպանված չէ | Գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային տարբերակով, սակայն գրանցամատյանները վարելու կարգի վերաբերյալ Ավագանու որոշում առկա չէ | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| **38** | 2) | *սահմանում է համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները.* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետ | Պահպանված չէ | Սահմանված չկա: | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| **38** | 3) | *համայնքի ավագանին սահմանում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները.* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետ, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մաս | Պահպանված չէ | Որոշում չկա | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| **38** | 5) | *ավագանին սահմանում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները:* | <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մաս | Պահպանված չէ | Որոշում չկա: | Ապահովել դրույթի պահանջների կատարումը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **44** | 4) | *ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել է ավագանու որևէ մշտական հանձնաժողովի և մասնակցել դրա նիստերին.* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի պահանջների կատարումը: |
| | **ԳԼՈՒԽ 2 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | | | | | |
| **48** | 22) | *Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող փարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետ | Պահպանված չէ | Սխեման բացակայում է: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| | **ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ** | | | | | |
| **55** | 2) | *համայնքի ղեկավարն կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից.* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մաս | Թերի է պահպանված | 2021 թվականի բյուջեի նախագծում բացակայում է բյուջետային ուղերձը | Ապահովել դրույթի կատարումը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 55 | 2-ա. | *բյուջետային ուղերձը ներառում է համայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի բ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| 55 | 2-բ. | *բյուջետային ուղերձը ներառում է համայնքի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումը, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեֆիցիտի (պակասուրդի) կամ հավելուրդի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային ցուցանիշների հետ,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի գ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| 55 | 2-գ. | *բյուջետային ուղերձը ներառում է համայնքի բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի՝ իրավական հիմքը. բովանդակությունը. խնդիրները և նպատակները. կատարման փուլերը և ժամկետները,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի դ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| 55 | 2-դ. | *բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| 55 | 2-ե. | *բյուջետային ուղերձը ներառում է բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդի ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը,* | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի զ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 55 | 2-գ. | բյուջետային ուղերձը ներառում է պետական բյուջեի նախագծում կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին նախատեսված հատկացումների մասին, | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի է) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| 55 | 2-է. | բյուջետային ուղերձը ներառում է տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի թ) կետ | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| | ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ | | | | | |
| 56 | 4) | իրականացնում է միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով. | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետ | Պահպանված չէ | Չկա համայնքի ԱԻ և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով, որոշումով հաստատված հանձնաժողովի կազմը, կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանը: | Ստեղծել համայնքի ԱԻ և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով, որոշումով հաստատել հանձնաժողովի կազմը, կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 56 | 10) | *կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.* | *<<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ* | Թերի է պահպանված | X | Համայնքի ղեկավարի որոշումով ստեղծել համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհուրդ, մշակել համայնքի Աղետների Ռիսկի Կառավարման պլանը և Սյունիքի ՄՓՎ հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ղեկավարի որոշումով հաստատել այն: |
| 56 | 11) | *կազմակերպում և իրականացնում են համայնքում քաղաքացիական պաշտպանությունը.* | *<<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ* | Թերի է պահպանված | Առկա է համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 22-ի N22-Ա որոշումը՝ համայնքի ՔՊ պլանը հաստատելու մասին: | ճշգրտել համայնքի ՔՊ պլանը |
| 56 | 12) | *իրականացնում են համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների փարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.* | *<<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետ* | Թերի է պահպանված | X | ճշգրտել համայնքի տարահանման պլանը, բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկները |
| 56 | 13) | *ստեղծում են քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում են այդ ուժերի պատրաստականությունը.* | *<<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի է) կետ* | Թերի է պահպանված | X | ստեղծել համայնքային ՔՊ կազմավորումներ ապահովել նրանց պատրաստականությունը |
| | *ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ* | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 57 | 5) | *գույքագրման փաստաթղթերին կցվում է համայնքի ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները.* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մաս | Պահպանված չէ | Չկա համապատասխան քարտեզի պատճենը: Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 57 | 6) | *ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը ներկայացվում են ավագանու հաստատմանը, ընթացիկ քարտեզի փոփոխությունները կատարվում են գույքագրման փաստաթղթերի համար սահմանված պահանջներին համապատասխան.* | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մաս | Պահպանված չէ | Չկա համապատասխան քարտեզի պատճենը: Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| | ***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ*** | | | | | |
| 59 | 1-է. | *իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.* | <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ը) կետ<br><br>(օրենքի 2020 թվականի մայիսի 6-ի ՀՕ 267-Ն խմբագրմամբ տարբերակում դրույթները որոշակիորեն փոխվել են և շարադրված են օրենքի նոր տարբերակի 25-րդ հոդվածում) | Թերի է պահպանված | Իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ: Համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների կանոնադրություններում դրույթներ կան, որոնք հնացել են, և անհրաժեշտ է դրանք համապատասխանեցնել «Նախադպրոցական կրթության մասին» գործող օրենքին: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| | ***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ*** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 61 | 12) | *Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը.* | «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենք, հոդված 21 | Թերի է պահպանված | Համայնքի վարչական տարածքում գործող ոչ բոլոր սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտները, բնակելի, հասարակական, արտադրական շենքերը և կառույցներն են մատչելի հաշմանդամների համար: | Միջոցներ ձեռնարկել նմանատիպ օբյեկտներում հաշմանդամների համար մատչելիությունն ապահովելու ուղղությամբ: |
| | ***2. Այլ գերատեսչությունների կողմից հաստատված հարցաշարերի մասով՝*** | | | | | |
| | **2.1. Քաղաքաշինության բնագավառ** | | | | | |
| | | 6.01. Համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծերը համապատասխանում են ՃՀԱ-ում նշված դրույթներին և ՀՀ օրենսդրությամբ ճարտշին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին | X | Թերի է պահպանված | Թվով 5 նախագծերում բացակայում է շինարարության տևողության նորմատիվային գրաֆիկները, խախտվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանը և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 98-րդ կետի պահանջները | Առաջարկվում է ապահովել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանը և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 98-րդ կետի պահանջները |
| | | 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | X | Թերի է պահպանված | N 8 22.07.2021թ շին. թույլ N 9 22.07.2021թ շին. թույլ N 12 10.11.2021թ շին. թույլ N 13 11,11,2021թ շին. թույլ N 14 15.11.2021թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ իրազեկվում է ՀՀ համապատասխան մարզպետը | X | Թերի է պահպանված | շին. թույլ N 7 22.07.2021թ շին. թույլ N 8 22.07.2021թ շին. թույլ N 9 22.07.2021թ շին. թույլ N 12 10.11.2021թ շին. թույլ N 13 11,11,2021թ շին. թույլ N 14 15.11.2021թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |
| | | 10.01. Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշում, հավելված N 1, կետ 9) | X | Թերի է պահպանված | մատյաններն առկա են, վկայականների տրամադրման անհրաժեշտություն չի ծագել, մատյանների լրացումը կատարված է ընդհատումներով | X |
| | | 10.02. Հուղարկավորությունների հետ կապված մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկի հաստատումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N 1, կետ 12, 13) | X | Չի պահպանված | Ցանկեր չեն սահմանված: | Սահմանել ցանկերը |
| | | 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | X | Չի պահպանված | ապահովել հատակագծերի մշակումը և հաստատումը | Ապահովել համապատասխան փաստաթղթերի կազմումը: |
| | | 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | X | Չի պահպանված | տրամադրվում են առանց սահմանված չափերի պահպանման: | Այսուհետ ապահովել սահմանված չափերի պահպանումը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | X | Չի պահպանված | Գերեզմանատները մաքրվում են, սակայն բացակայում են ցուցանակները: | Տեղադրել անհրաժեշտ նյութերը: |
| | **2.2. Առողջապահության բնագավառ** | | | | | |
| | | 1-1. [illegible] ժամանակացույցը, 1-2. ապահովված են սպառման թափոնների հեռացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաճախականությունը՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, 1-3. +50C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամեն օր [illegible] | X | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի կատարումը: |
| | | 2-1. Առկա են աղբահանության սխեմաները, համաձայն որոնց իրականացնում են ոչ վնասակար թափոնների հավաքումը՝ սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը): | X | Պահպանված չէ | X | Կազմել ըստ բնակավայրերի աղբահանության սխեմաները և հաստատել: |
| | | 2-2. Առկա են [illegible] կափարիչները, որոնք 1) պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը, 2) ունեն մաքրման և ախտահանման [illegible] | X | Պահպանված չէ | X | Աղբարկղների վրա կատարել նշումներ, հստակեցնել աղբամանների տեղերը, հարթեցնել մակերեսները: |
| | | 2-8. Աղբահավաք կոնտեյներները ախտահանված են համապատասխան ախտահանիչ լուծույթներով (ամիսը 1 անգամ հաճախականությամբ) | X | Պահպանված չէ | X | Ստեղծել աղբարկղների ախտահանման պայմաններ, կազմակերպել ախտահանում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2-17. Ամռան ամիսներին փողոցները ենթարկված են ջրման: | X | Պահպանված չէ | Համայնքը չունի ջրցան մեքենաներ | |
| | | 2-20. Աղբատար փոխադրամիջոցների հետ առկա են. 1) փակ թափքեր, 2) աղբաջրերը հավաքող համակարգ, 3) կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք, 4) կոնտեյներները լվանալու համակարգ: | X | Թերի է պահպանված | Աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված և հարմարեցված մեքենաներով | Միջոցներ ձեռնարկել դրույթի ամբողջական կատարումն ապահովելու ուղղությամբ: |
| | | 3-2. Ջրամատակարարման բաշխիչ ցանցերում առկա է խմելու ջրի արտադրական հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանվածų (մանրէաբանական ցուցանիշներով սահմանված հաճախականությամբ): | X | Թերի է պահպանված | Համայնքի բնակավայրերի մի մասում ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից, որոնք չունեն բավարար միջոցներ: | Միջոցներ ձեռնարկել դրույթի ամբողջական կատարումն ապահովելու ուղղությամբ: |
| | | 3-3. Մինչև ջուրը բաշխիչ ցանց մղելը առկա է խմելու ջրի մնացորդային քլորի պարունակության հսկողության իրականացում | X | Թերի է պահպանված | Համայնքի բնակավայրերի մի մասում ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից, որոնք չունեն բավարար միջոցներ: | Միջոցներ ձեռնարկել դրույթի ամբողջական կատարումն ապահովելու ուղղությամբ: |
| | **2.3. Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ** | | | | | |
| | | ***7.01.*** Համայնքի վարչական սահմաններում տարածքների սանիտարական մաքրման սխեմաների առկայություն | X | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

**Աշխատանքային խմբի ղեկավար, Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝**

**Սեյրան Ավետիսյան**

**Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝**

**Դավիթ Ղուլունց**